

ՀՏԴ 323

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՐԻԶՄԱՅԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Աշխատանքը կատարված է 20 RF -189 «Խարիզմատիկ առաջնորդությունն արևելքի ժամանակակից քաղաքական մշակույթներում (մարդաբանական սապեկտ)» գիտական ծրագրի շրջանակներում:

Հոդվածում հիմնավորված է մոտեցում, որ ժողովրդավարական անցումը՝ որպես քաղաքական փոփոխությունների բազմաշերտ գործընթաց ենթադրում է քաղաքական խարիզմայի համակարգված ուսումնասիրություն: Այդ համատեքստում փաստարկվում է մոտեցում, որ Ս. Հանթինգթոնի ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում տեղի ունեցած հետնահանջներից հիմնականում կարելի էր խուսափել, եթե փոփոխությունները տեղի ունենային ժողովրդավարական համախմբման սկզբունքների հիման վրա՝ ստեղծելով հնարավորություններ, մի կողմից հաղթահարել քաղաքական անորոշությունները, մյուս կողմից՝ կերպափոխել քաղաքական խարիզման:

Ներկայացվում է, որ միայն **կերպափոխվող** խարիզմատիկ իշխանությունն իր խարիզմատիկ լիդերներով կարող են դուրս բերել երկիրը տարաբնույթ ճգնաժամերից՝ հետամուտ լինելով **չափելի, հասանելի, կողմնորոշված և ինստիտուցիոնալ սահմանված խնդիրների լուծում ապագային միտված ժամանակի մեջ:**

Բանալի բառեր. ժողովրդավարական անցում, ժողովրդավարական համախմբում, քաղաքական խարիզմա, կեղծ ժողովրդավարներ («predemocratic» politicians), հանրային քաղաքականություն, խարիզմայի անկում, բազմամակարդակ խարիզմա, խարիզմայի կերպափոխում:

Ժողովրդավարական անցումը՝ որպես քաղաքական փոփոխությունների բազմաշերտ գործընթաց ենթադրում է հասարաքաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխում: Արդեն 1990-ական թվականներին Ս. Հանթինգթոնի ժողովրդավարական «երրորդ ալիքի» հայեցակարգի շրջանակներում, համեմատության մեջ սկսեցին լայնորեն

ուսումնասիրել հարավեվրոպական և լատինաամերիկյան երկրների փորձը՝ որպես հետկոմունիստական հասարաքաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխման բանալի: Հետկոմունիստական երկրներում քաղաքական փոփոխությունները տեղի ունեցան «անցումագիտություն», «տրանսֆորմացիա», «ժողովրդավարական համախմբում», «գծային ազատականացում» հասկացությունների արժեքաբանության տեսակիրառական սկզբունքների մեխանիկական ներդրման հիման վրա: Ենթադրվում էր, որ ոչ ժողովրդավարական վարչակարգերի կազմաքանդումը կհանգեցնի ժողովրդավարացման, բայց ինչպես ռուս քաղաքագետ Ա. Յու. Մելվիլն է նշում «ժողովրդավարական նորմերի կայացման և զարգացման պատմությունը խոսում է այն մասին որ ժողովրդավարությունը դա զարգացման գաղափարների և սկզբունքների, ինստիտուտների ու արարողակարգերի նորացման ու ընդարձակման գործընթաց է: Այսինքն՝ պատմության հոլովույթում ալիքային զարգացում ապրած այսօրվա ժողովրդավարական բնութագրիչներ ունեցող քաղաքական համակարգերի և բացառապես մեր ժամանակների արդյունք ժողովրդավարությունների տարբերություններն այնքան ակնհայտ են, որ ժամանակակից քաղաքական մտքի առջև դրվում է փոփոխությունների և քաղաքական զարգացման մասին ձևավորված պատկերացումների հայեցակարգային նորացման խնդիրը՝ հետկոմունիստական կերպափոխումների տարաբնույթ հաշվառմամբ» [1, c. 22-43]: Ուշագրավ է նաև անցումագետ Լ. Դայմոնդի պնդումը, որ «XXI դար հասարակությունները թևակոխել են ժողովրդավարության ճգնաժամով, և «երրորդ ալիքը» կարող էր խուսափել պահպանողական «հետնահանջից» եթե փոփոխությունները տեղի ունենային ժողովրդավարական համախմբման սկզբունքների հիման վրա՝ ստեղծելով նոր հնարավորություններ, մի կողմից հաղթահարել քաղաքական անորոշությունները, մյուս կողմից՝ բացառել իշխանության օրինականության ճգնաժամը, և, կոշտ ու մրցունակությամբ պակասով տառապող գործիչների մուտքը քաղաքական համակարգ» [2, pp 36-50]: Կարելի է համաձայնել, որ միայն դերակատարների օրինական իշխանության ձևավորումը կարող էր ավարտին հասցնել ժողովրդավարական անցումից համախմբում ձևաչափը՝ մշակելով «անորոշությունից դուրս գալու» արդյունավետ ուղի անցումային փուլում գտնվող հասարակությունների համար: Սակայն ի սկզբանե գծային զարգացում ենթադրող ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հետխորհրդային հասարակություններում ստեղծվել է քաղաքական վարչակարգերի, իշխանության բաշխման և վերարտադրման կառույցների չափազանց լայն տարրապատկեր, ձևավորվել են տարբեր քաղաքական համակարգեր [3, էջ 111-113]: Ավելին՝ գծային ազատականացման հետևանքով հետխորհրդային երկրների ժո-

ղովրդավարական անցումը հանգելով քաղաքական զարգացման (բաշխման, շարժունակության, ինքնության, մասնակցության, օրինականության) ճգնաժամերի խորտակեց ապստամբ զանգվածների հավատը խարիզմատիկ լիդերների իշխանության նկատմամբ: Դա ստեղծեց այնպիսի լուրջ վտանգներ ինչպիսիք են՝ սպասումների հիասթափությունը, օտարումը, կոռուպցիան, սոցիալական անարդարությունը, միջանձնային անվստահությունը: Ակնհայտ է, որ առկա հիմնախնդիրների լուծումն ուղղակիորեն պայմանավորված են ինչպես նշում է Ս. Հանթինգտոնը «հասարակության բարձր մակարդակի հասնելն ու այն պահելը շատ կախված է քաղաքական ինստիտուտների պատասխանատու գործունեությունից» [4, c. 25-26]: Ի գիտություն ընդունելով Ս. Հանթինգթոնի մոտեցումը՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժողովրդավարական անցման գործընթացում կուտակված հսկայածավալ տեսակիրառական նյութերի վերլուծությունը հայեցակարգային հստակություն է ենթադրում: Այդ առումով ուշագրավ է զինվորականների, պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություններում ավտորիտար մտածողություն և ոչ մրցունակ տնտեսություն խրախուսող կեղծ ժողովրդավարների («predemocratic» politicians) ինստիտուտի առկայության քննադատությունն անցումագետ Գ. Օ' Դոնելլի կողմից: Դասակարգելով Բրազիլիայի ձգձգված անցմանը վերաբերող արդի խնդիրները Գ. Օ' Դոնելլը կարևորում է՝ **զինված ուժերի ինստիտուցիոնալ ներկայացվածությունը և մեծ ազդեցությունը, բյուրոկրատացման բարձր կարգավիճակը, հայրախնամ քաղաքական կառավարման ոճի (կլենտելիզմ և պերսոնալիզացիա) առկայությունը:** Հենց այս երևույթների ծնունդ կեղծ ժողովրդավարներն ստեղծում են մի կողմից քաղաքական անորոշություն, մյուս կողմից տեղի է ունենում գործադիր իշխանության ինստիտուտոնալ կարգի զավթում՝ ամբոխահաճ քաղաքական գործիչի կողմից: Այս համատեքստում էլ Օ'Դոնելլը տարբերակեց «**ժողովրդավարական անցում**» և «**ժողովրդավարական համախմբում**» հասկացությունները: Ելակետ ընդունելով Օ'Դոնելլի մոտեցումը՝ Սկոտ Մէինվարինգն ուշադրությունը կենտրոնացնելով համախմբագիտության հիմնախնդիրների վրա կարևորեց օրինականությունը, որը հնարավորություն է տալիս ազատվել հանրային աջակցություն չվայելող կառավարիչներից [5, c. 26]: Այս համատեքստում էլ Դ. Ռուշեմերը, Ս. Հյուբները և Դժ. Ստեֆենսոնն ուսումնասիրելով պետական կառավարման տարբեր ձևերը՝ առաջարկեցին իրենց մոտեցումը՝ կերպափոխման գործընթացում արարողակարգային նորմերի, սոցիալական տարբերակման և իշխանության ժողովրդավարության վրա էականորեն ազդում է խարիզման [6, pp. 10, 18-25]: Փաստորեն, հանրագումարելով ժողովրդա-

վարական անցման փորձն անցումագետներն եզրակացրեցին, որ քաղաքական խարիզմայի կերպափոխման ուսումնասիրումը դարձել է անհրաժեշտություն, քանի որ ձևավորվել է մոտեցում, ըստ որի՝ ինստիտուցիոնալ ժողովրդավարությունը հնարավոր է ապահովել նաև քաղաքական խարիզմայի միջոցով: Այս դիտանկյունից էլ ժողովրդավարական անցման գործընթացում խարիզմայի հիմնական կրողի և արարողի՝ քաղաքական լիդերի գործունեության ուսումնասիրությունը երկակի կարևորություն է ստացել: Այն կարող է բնականոն արդիականացնել հանրային քաղաքականությունը՝ պայմանավորված ինչպես տարրաբնույթ անձնական շարժառիթներով, այնպես էլ երբ իրական անհատականությունն դիտարկվում է որպես և՛ ղեկավարման, և՛ կառավարման նորարարացման անհրաժեշտ բաղադրիչ: Ժողովրդավարական անցման գործընթացում լիդերի խարիզմայի միջոցով հանրային քաղաքականության բնականոն արդիականացման և փոփոխության կառավարման տեսանկյունից առաջարկում ենք տարբերակել «governance» և «management» հասկացությունները: Այսպես, «Governance» հասկացությունը նախապես մշակված պատասխանատվության և փորձի քաղաքականության և ընթացակարգերի այնպիսի ամբողջություն է, որն օգտագործվում է ռազմավարական կառավարման ապահովման, դրված նպատակներին հասնելու, ունեցած պաշարները հաշվետվողական օգտագործման և ռիսկերը կառավարելի դարձնելու ուղիների մշակման համար: «Management» հասկացությունը ցանկացած կազմակերպության տարբեր պաշարների (մարդկային, ֆինանսական, ֆիզիկական և տեղեկատվական) պլանավորման, կարգավորման, ուղղորդման, վերահսկողության գործընթաց է՝ կազմակերպության առջև դրված նպատակներին հասնելու համար: Եթե «Governance» հասկացությունը ներառում է խնդրի սահմանում և ճիշտ մշակած գործողությունների նպատակամետ կատարում, ապա «management»՝ ճիշտ մշակած գործողությունների ճիշտ կատարում է: Պայմանավորված հանրային քաղաքականության արժեքաբանությունից նպատակահարմար է երկու մոտեցումներն էլ ժողովրդավարական անցման գործընթացում զուգամիտված օգտագործել: Սակայն այդ երկրները, որպեսզի կարողանան նպատակամետ պատասխանեն մարտահրավերներին՝ գերապատվությունը պետք է տան «Governance»-ի սկզբունքներով վարվող քաղաքականությանը: Մեր կարծիքով դա հնարավորություն կտա իշխանության իրականացման մշակույթը հարստացնել խարիզմատիկ պատասխանատվությամբ և անցյալ ներկա ապագա եռաչափության մեջ կարևորել քաղաքական խարիզմայի արդյունավետ գործառումը՝ պայմանավորված հանրային քաղաքականության բնականոն արդիականացմամբ և քաղաքական ժամանակի առանձնահատկությամբ:

Ի՞նչ է խարիզման: Հին հունական դիցաբանության մեջ խարիզման մեկնաբանվում էր հմայքի և գրավչության դիցուհիների՝ **Քարիտների**, միմյանց փոխլրացնող կերպարների օգնությամբ: Ըստ **Հեսիոդոսի** Քարիտները հայր աստված **Ջևսի** և օվկիանոսի **Էվրիմոնայի** երեք դուստրերն էին **Էփրոսինեն**՝ տոնական խնդության, **Ագլայան**՝ տոնական շող ու փայլի, և **Թալիան**՝ ծաղկուն երջանկության դիցուհիներն էին: Նրանք Օլիմպոսում էին ապրում և պարտավոր էին իրենց գրավչությամբ ու հմայքով ուղեկցել սիրո և գեղեցկության **Ափրոդիտեին**, պերճախոսության դիցուհի **Պեյթոյին** և հանրահայտ **Հերմեսին**: Այստեղից ակնհայտ է, որ Քարիտները, ըստ էության, խորհրդանշում են Ափրոդիտեի՝ գեղեցկության և Հերմեսի՝ շողորթորթ խոսքի միջոցով ուշադրություն գրավելու ունակություն: Այս նպատակով էլ **Ափրոդիտեին** նվիրված տաճարներում Քարիտներին նվիրված պաշտպանմունքային ծեսեր են կատարվել՝ ակնկալելով ստանալ նրբագեղություն, գրավչություն, բարեհաջություն, փառք, շնորհ, պատիվ, պարգև, երանություն և դրանց միջոցով ազդել շրջապատ վրա [7, c. 126] : Փաստորեն, խարիզման այն «աստվածային պարզեն» է, որով օժտված անհատն ազդեցություն ունի զանգվածների վրա: Նշենք, որ խարիզմայի նման մեկնաբանության հիմքը պայմանավորված է Մ. Վեբերի հայեցակարգի մեկնաբանումների **փոխակերպման, ընդլայնման նաև վերաբժևորման** հետ: Այդ բարդ գործընթացում որոշիչը մարդու կողմից քաղաքացու իր դերի ազդեցության որակական գիտակցումն է: Առանց դրա անհմաստ է խոսել քաղաքական իշխանության և զանգվածներ վրա խարիզմայի կառուցողական ազդեցության մասին: Այս նկատառումներով էլ Օքսֆորդի բացատրական բառարանում «խարիզմա» (**հուն. Χάρισμα**) հասկացությունը բնութագրվում է որպես մարդկանց գրավելու հզոր (ուժեղ) անձնային որակ [8, p. 236]: Ուսումնասիրելով այս եզրույթի ծագումնաբանությունը՝ նշենք, որ այն տարբեր դրսևորումներ ունի տարբեր քաղաքակրթություններում և տարբեր մարդաբանական տիպերում: Արդյունքում՝ խարիզման բնորոշ է և՛ անգլիական «լիդերին», և՛ գերմանական «ֆյուրերին», և՛ ռուսական «վոժդին» [9, c. 5-6.]: Փաստորեն, անկախ քաղաքակրթական տարբերություններից՝ խարիզման՝ որպես աստվածային շնորհ, ներառված է քաղաքական իշխանության և իշխանական հարաբերությունների ձգտող բոլոր անհատների վարքաբանություն: Այս առումով քաղաքական խարիզման ուղիղ համեմատական է լիդերի խարիզմայի հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս բնութագրել այն **լիդեր-հետևորդ** հարաբերությունները՝ որպես սոցիալ-հոգեբանական ֆենոմեն: Ըստ ֆենոմենոլոգ Մարկ Լուչիի «խարիզման վառ արտահայտված գենետիկական հատկություններ են, որոնք հստակ երևում են

Ֆենտոտիպի (արտաքինի) մեջ» [10, c 123.]: Այլ մոտեցման համաձայն՝ «խարիզման ոչ թե անձի բնածին կամ մարգարեական հատկություններով օժտված լինելն է, այլ ոչ վերբալ վարքի արդյունք, ինչը, կախված իրավիճակից...» [11, c. 11.]:

Ուսումնասիրելով «**խարիզմա**» հասկացության ամենատարբեր մեկնաբանություններն՝ փաստենք, որ Մ.Վեբերի խարիզմայի հայեցակարգն իր տեսական հիմնավորվածությամբ մնում է անգերազանցելի: XX դարի սկզբին «իշխանություն», «տիրապետում» հասկացությունների կառուցվածքի ուսումնասիրմանը զուգահեռ Մ. Վեբերը ներկայացրեց խարիզման՝ որպես անհատին գերբնական ուժով օժտող սոցիալ- հոգեբանական ֆենոմեն՝ որպես Աստծո պարգև, աստվածածին ներուժ, «Աստծուց տրված շնորհ» [12]: Ըստ Մ. Վեբերի՝ **այդպիսի անհատն ունի** «առաջնորդ» դառնալու բոլոր հնարավորությունները. քանի որ խարիզման առաջին հերթին անհատի բացառիկ հատկանիշների արդյունք է և որպես այդպիսին այն «հասանելի չէ բոլորին, և հենց դրա համար էլ արիստոկրատիզմի բարձրագույն հնարավորություն է և շրջապատի երևակայության արդյունք» [13, c. 341- 342]: Ասվածի շրջանակներում Մ. Վեբերը տարբերակեց իշխանության իրականացման քաղաքակրթական և դավանաբանական չափումները, համակարգեց «խարիզմա» երևույթը որպես Աստծո պարգև, աստվածածին ներուժ, «Աստծուց տրված շնորհ և ողորմություն»: Ավելին՝ Մ. Վեբերը համոզված էր որ Աստվածային շնորհ խարիզման սերտորեն փոխկապակցված է նոր սոցիալական կառույցների ստեղծման, ինչպես նաև անհատի **ազատության, ստեղծագործական նախաձեռնությունների, պատասխանատվության և սոցիալականացման խնդրի հետ:**

Խարիզմա և Խարիզմատիկ լիդեր. Մարդկային բացառիկ հատկություններով օժտված խարիզմատիկ առաջնորդը «ծնվում է» հեղափոխական փոփոխություններից: Փաստորեն, խարիզման մարդու այն որակն է, որն ընդունվում է որպես անսովոր, գերբնական, գերմարդկային ուժով օժտված անհատ՝ ուղարկված Աստծո կողմից՝ որպես **հերոս-փրկիչ** [14, c. 646]: Տվյալ մոտեցմամբ Մ. Վեբերը խարիզման բխեցնում է հավատի և հույսի զգացումից, ինչպես նաև օրինականության ճանաչումից: Այս առումով էլ ուսումնասիրվում է հարիզմատիկ հեղինակության **անհայտանալու, վերջավոր լինելու և կերպափոխվելու հնարավորությունը՝ համաձայն** իշխանական հարաբերություններում առկա «**հերոս-փրկիչ**» **կերպարների** իրականացման արժեշահային համակարգի: Ըստ Մ. Վեբերի **հարիզմատիկ տիրապետում** ունի դրսևորման բազմամակարդակ ձևեր. հարիզմայի հիմքի վրա են ձևավորվել համաշխարհային կրոնի հիմնադիրներ Բուդդայի, Հիսուս Քրիստոսի և Մուհամեդի, պետության հիմնադիրներ՝ Լիկուրգի և Սոլոնի, մեծ զինվորականներ Ալեքսանդր Մակե-

դոնացու, Հուլիոս Կեսարի, Նապոլեոնի, Չինգիզ Խանի և այլնի կերպարները [12]: Գերակա տեղ ու դեր հատկացնելով «**խարիզմատիկ տիրապետություն**» հասկացությունը՝ Մ. Վեբերը գտնում է, որ այն հնարավորություն է տալիս մեծ և փոքր խմբերին միավորելու՝ գաղափարների անձնավորման միջոցով: Այս համատեքստում հատկանշական է, որ քաղաքական անկայունությունների ժամանակ լիդեր են դարձել այն անձինք, որոնք ի սկզբանե հակված են եղել իրենց առաքելություն իրականացնելիս, իրավիճակով և արդյունավետ կառավարման տրամաբանությամբ պայմանավորված, խարիզմայի արժեքային բովանդակությունը կերպարանափոխության ենթարկվել, ինչն էլ պայմանավորում է նրանց իրականացրած իշխանության մեջ եղած հակասությունները [15, էջ 140]: **Դրանով է բացատրվում այն, որ խարիզմատիկ լիդերները շատ տարաբնույթ են և, պայմանավորված քաղաքական զարգացման ճգնաժամերի և առկա մարտահրավերների էությամբ կերպափոխվում են:** Սակայն, նկատի պետք է ունենալ նաև, որ խարիզմատիկ առաջնորդներ հավասարապես կան կառավարման բոլոր ոլորտներում, և նրանք միայն վարչական էություն և բնույթ չունեն: Դրա վառ օրինակ է Մահաթմա Գանդին, որն իր հեղինակությամբ ու նվիրվածությամբ հնդկ ժողովրդին տարավ ոչ բռնի պայքարի՝ քաղաքացիական անհնազանդության, հաղթեց և չընդգրկվեց կառավարության մեջ, երբ իր ղեկավարած «Ազգային կոնգրես» կուսակցությունը դարձավ կառավարող: Այստեղ արժևորվում է լիդերի քաղաքական գիտակցության էվոյուցիան կառավարման գաղափարի նկատմամբ ունեցած ռացիոնալի և իռացիոնալի փախհարաբերությունների ներդաշնակման կարողությունը: Լինելով բարդ և բազմաչափ երևույթ՝ խարիզմատիկ տիրապետության խնդիրը սերտորեն կապված է սոցիալ-քաղաքական շարունակական փոփոխությունների, կառավարման նոր ինստիտուտների ստեղծման, ինչպես նաև սոցիալական կարգի պահպանման խնդիրների օրինականության հետ: Այս ելակետային մոտեցմամբ էլ նեովեբերականները խարիզմայի և օրինականության փոխհարաբերությունները սերտորեն կապում են կառավարողի արհեստավարժության հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով հանրային շահերի նպատակամետ և՛ օբյեկտիվ վերլուծությանը, և՛ սուբյեկտիվ կերպափոխմանը [16, ր. 557]: Հետևաբար, սահմանված նպատակներին հասնելու համար, կառավարող դասը գերխնդիր ունի բարձրացնելով բյուրոկրատական ապարատի արհեստավարժ գործունեությունը հետամուտ լինել արժանավորների (մերիտոկրատիայի) իշխանությանը: Ավելին՝ ոչ արհեստավարժները չեն կարող ինքնուրույն սահմանել քաղաքական նպատակներ և գիտակցաբար ընտրել այդ նպատակների իրականացման համար համապատասխան միջոցներ: Ըստ Մ. Վեբերի՝ **ազգը և պետությունը** միասնական

համակարգ են, որոնք առանց մեկը մյուսի չեն կարող գոյատևել: Այդուհանդերձ, ազգը պետք է դառնա պետություն, որպեսզի պաշտպանի իր մշակութային արժեքները, իսկ պետությունն իր հերթին պետք է դառնա ազգ՝ ներքին միասնականության և համակեցության պահպանման նպատակով: Այս դիրքորոշմամբ Մ. Վեբերը պետության պահպանման համար ավելի կարևորում է ուժի կիրառումը, քան խարիզման, համոզված լինելով որ հասարակական կարծիքի փոփոխությունը ձևավորվում է «վերևում»՝ փոխելով քաղաքական գործունեության բովանդակությունը [17, c. 68]:

Քաղաքականության փորձն ապացուցում է, որ ամբոխի օգնությամբ (նշանակություն չունի, թե այդ ամբոխը, որ Աստծուն է ծառայում) իշխանության հասած առաջնորդները կառավարում իրականացնելիս կա՛մ կանխավ դատապարտված են կործանման, կա՛մ հրաժարվում են իրենց համոզմունքներից, կա՛մ փոխակերպման են ենթարկում իրենց գաղափարները՝ հիմնականում չլուծելով իրենց առաջադրված հիմնախնդիրները: Հուսախաբ լինելով իր իսկ կողմից ընտրված «մարգարեների» կողմից՝ ամբոխն օտարվում է իրականությունից և դուրս գալիս (կամ դուրս մղվում) քաղաքական կառավարման թատերաբեմից: Իշխանության այսպիսի էությունը հոգեբանորեն զանգվածներին դարձնում է մարգինալ արժեքների, միջերի կրող և ստեղծող: Օրինականության այս ձևը հիմնված է առաջնորդի և ամբոխի մարգինալ համակրանքի վրա: Խարիզմատիկ օրինականությունը, ըստ Մ.Վեբերի, ոչ միայն անկայուն է, փոփոխական, այլև անպատասխանատու է: Խարիզման իշխանական հարաբերություններում կարող է հարատևել այնքան ժամանակ, մինչև որ կառավարողներն իշխանություն կիրականացնեն ռացիոնալ-իրավական (կամ [եզա]) հիմքի վրա [15, էջ 144-152]:

Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս առանձնացնել ժամանակակից խարիզմատիկ լիդերի հետևյալ հատկությունները. **նպատակադրում, արդյունքի կառավարում, նորարարություն, հաջողություն** և այլն: Այս համատեքստում էլ ըստ Ռ. Հաուսի՝ խարիզման չի բնութագրում լիդերին կամ հետևորդներին, այլ բնութագրում է նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները [18, p. 189-207]: Իսկ Ջ. Կոնգերին և Ռ. Կանունգոյն համոզված էին, որ խարիզման լիդերի և նրա հետևորդների համագործակցության արդյունքն է, որը ներառում է երեք փուլ՝ **իրավիճակի գնահատում, ռազմավարական հեռանկարների կանխատեսում (մասնավորապես՝ ոչ ավանդական նպատակների ձևակերպման միջոցով) և հետևորդների համար ոգեշնչման և օրինակ ծառայելու կարողություն**: Միևնույն ժամանակ, քաղաքականությունը որպես խաղ ընկալելով՝ խարիզմատիկ լիդերներն իրատեսորեն գնահատում և հաճախ կերպափոխում են իրենց խարիզման [19, p. p. 47-50]: Այդ գործընթացը ենթադրում է հաղորդակցման և բանակցությունների արվեստի զարգացում, որը

հանգեցնում է՝ «**փոխակերպվող լիդերություն**»։ Այս հիմքի վրա լիդերն իր հետևորդներին է ներկայացնում ապագայի իր տեսլականը, որոնք էլ ոգեշնչվելով այդ տեսլականով նախ ընդարձակում են աջակիցների բանակը, ապա համախմբվում են՝ իրագործելու լիդերի կողմից մշակված՝ ապագային միտված գաղափարները։ Այս մոտեցմամբ լիդերության տեսաբան Բ. Բասը լիդերի և նրա հետևորդների երկարակեցությունը կարևորելով՝ խարիզման մեկնաբանում է որպես փոխակերպվող լիդերության բաղադրիչ [20, p. 511]:

Մեր հետազոտության համար հիմք ընդունելով Մ. Վեբերի խարիզմայի հայեցակարգը՝ նպատակահարմար ենք համարում նաև ներկայացնել Է. Շիլզի խիստ արդիական մոտեցումը խարիզմայի բազմամակարդակ հայեցակարգի վերաբերյալ [21, c. 5-18.]: Այն հնարավորություն է տալիս ժողովրդավարական անցման գործընթացում ուսումնասիրել խարիզման իր արժեքային բազմաչափությամբ՝ դիտարկելով այն հասարակական կարգի և համակեցության պահպանման ակտիվ կենտրոնների հետ փոխհարաբերության մեջ։ Ըստ Է. Շիլզի՝ խարիզման հատկանիշ է, որը բնորոշ է, ոչ միայն լիդերներին, այլև անհատականություններին, գործողություններին, ինստիտուտներին, որոնք ապահպանում են հասարակական կարգը։ Այդ նկատառումներով է։ Շիլզը գերակա նշանակություն է տալիս ինստիտուցիոնալ խարիզմային՝ պնդելով, որ եթե չկա խարիզմայի այդօրինակ լայն ընդգրկում, ապա այն ունի ապակառուցողական և հանրային համակեցությունը խաթարող բնույթ [22, pp. 199-213]:

Մեր հետազոտության նպատակից ելնելով՝ ժողովրդավարական անցման գործընթացի ուսումնասիրման առանցքում եղած մեկնաբանությունները խարիզմայի հայեցակարգի արժեքաբանաության շուրջ՝ կարող ենք փաստել, որ խարիզմայով օժտված անհատը՝ որպես լիդեր, իր նատակամետ գործողություններով պարտավոր է քաղաքական իշխանությանը տալ խարիզմատիկ բնույթ՝ հետամուտ լինելով անցումից համախմբում գործընթացում հանրային շահի բնականոն արդիականացմանը։ Այս առումով **քաղաքական իշխանության խարիզման ուղիղ համեմատական է լիդերի խարիզմայի հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս լիդերության ինստիտուտին նպատակադրված հաղթահարել քաղաքական զարգացման ճգնաժամերը և հասարակությունը տանել բնականոն արդիականացման ուղով**։ Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ իրականացնելով ինստիտուցիոնալացված խարիզմատիկ իշխանություն խարիզմատիկ լիդերները կարողացել են դուրս բերել իրենց երկիրը տարաբնույթ ճգնաժամերից՝ հետամուտ լինելով **չափելի, հասանելի, կողմնորոշված և սահմանված խնդիրների որոշակի լուծմանը՝ որոշակի ժամանակի մեջ**։ Միայն այս չափանիշների հաշվառմամբ է

հնարավոր, որ խարիզմատիկ լիդերությանն իր մեջ կենտրոնացնի հանրային քաղաքականության շարունակական կերպափոխումների արժեքաբանությունը: Ուստի ՀՀ հանրային քաղաքականության հիմքում պետք է դնել խարիզմատիկ լիդերի կերպարի կայացումը և կերպափոխումը՝ համաձայն հանրային շահի գերակայության: Դա թույլ կտա բարձրացնել լիդերների պատասխանատվությունը և հրաժարվել քաղաքական գերշահույթից ու մենաշնորհից, այսինքն՝ բնականոն արդիականացնել հանրային քաղաքականությունը՝ համանույժ պատասխանելով ոչ միայն երկրին նետված մարտահրավերներին, այլև մարտահրավերներ նետել՝ լուռ զարգանալով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Мельвиль А. Ю.**, Выйти из “гетто”: о вкладе постсоветских исследований/Russian Studies в современную политическую науку, Полис, 2020. № 1.
2. Larry Diamond Breaking Out of the Democratic Slump Journal of Democracy Volume 31, Number 1 January 2020, 36-50 pp <https://www.ned.org/wp-content/uploads/2020/01/Breaking-Out-Democratic-Slump-Diamond.pdf>
3. **Մարգարյան Մարիամ**, Անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունները (մեթոդաբանական վերլուծություն), «21-րդ ԴԱՐ», թիվ 4(6), 2004.
4. **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003.
5. **Mainwaring S., O'Donnell G., Valenzuela J. S.**, Issues in Democratic Consolidation. Indiana: Notre Dame University Press, 1992.
6. **Rueschemeyer D. Huber Stephens, Stepens J. D.**, Capitalist Development and Democracy. Chicago: Chicago University Press, 1992.
7. **Аполлодор**, Мифологическая Библиотека. Л.: «Наука», Ленинградское отделение, 1972, 6.
8. **A. S. Hornby**, Oxford Advanced Learner's Dictionary of Current English, seventh edition, Oxford University Press, 2006.
9. **Фреик Н. В.**, Политическая харизма: обзор зарубежных концепций // Социологическое обозрение, 2001. Т. I. № 1.
10. **Василик М.А.**, Вершинин М.С. и др. Политология: словарь-справочник, М.: Гардарики, 2005.
11. **Оливия Фокс Кабейн**, Харизма. Как влиять, убеждать и вдохновлять, Альпина Паблицер, 2017.

12. **Макс Вебер**, Харизматическое господство, <http://www.politnauka.org/library/classic/veber-hg.php>

13. **Вебер М.**, Избранные произведения. Пер. с немецкого, сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл. П.П.Гайденок, М.: Прогресс, 1990.

14. **Вебер М.**, Политика как призвание и профессия// Изб. произведения: Пер. с нем. /Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл. П. П. Гайденок,- М.: Прогресс, 1990.

15. **Jennifer L. Epley**, Weber's Theory of Charismatic Leadership: The Case of Muslim Leaders in Contemporary Indonesian Politics// International Journal of Humanities and Social Science Vol. 5, No. 7; July 2015.

16. **Մարգարյան Մարիամ**, Քաղաքական լիդերություն. տեսություն և պրակտիկա, Եր., «Պետական ծառայություն», 2017.

17. **Saks M.**, The politics of integrative medicine: The case of CAM, European Journal of Integrative Medicine, 2015.

18. **Вебер М.**, Хозяйственная этика мировых религий. Попытка сравнительного исследования в области социологии религии. Введение // Избранное. Образ общества. М.: Юрист, 1994.

19. **Robert J. House**, A Theory of Charismatic Leadership, in Hunt and Larson (eds.), Leadership: The Cutting Edge, 1976.

20. **J.A. Conger and R.M. Kanungo** (eds.). Charismatic Leadership: The Elusive Factor in Organisational Effectiveness. — San Francisco, Jossey-Bass, 1988.

21. **Bass B. M.**, Bass and Stogdill's handbook of leadership: theory, research, and managerial applications. 3rd ed. N.Y., L., etc: The Free Press, 1990.

22. **Каспэ С.И.**, Назад к Шилзу: социальные науки, политическая реальность и парадокс безблагодатной харизмы // Полития. 2011. № 1 (60).

23. **Edward Shils**, Charisma, Order, and Status, American Sociological Review, Vol. 30, No. 2 (Apr., 1965), pp. 199-213 (15 pages), https://www.jstor.org/stable/2091564?read-now=1&refreqid=excelsior%3A7f3ab53c07413e6d19da40b0635220c7&seq=2#page_scan_tab_contents

ПРОБЛЕМЫ ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ХАРИЗМЫ В ПРОЦЕССЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА

МАРИАМ МАРГАРЯН

Академия государственного управления Республики Армения

Работа выполнена в рамках научного проекта 20 RF-189
«Харизматическое лидерство в современных политических культурах
Востока (антропологический аспект)».

В данной статье обосновывается подход, согласно которому демократический транзит как многослойный процесс политических изменений предполагает систематическое изучение политической харизмы. В этом контексте считается, что откатов, имевших место в рамках «третьей волны» демократизации С. Хантингтона, можно было бы избежать, если бы изменения происходили на основе принципов демократической консолидации, создавая возможности для преодоления политической неопределенности и трансформации политической харизмы.

Автор убежден, что только **преобразующееся** харизматическое правительство с его харизматическими лидерами может вывести страну из различных кризисов, добиваясь **измеримого, доступного и ориентированного решения определенных проблем, нацеленного на будущее.**

Ключевые слова: демократический транзит, демократическая консолидация, политическая харизма, лжедемократы («predemocratic» politicians), публичная политика, снижение харизмы, многоуровневая харизма, трансформация харизмы.

**ISSUES RELATED TO THE TRANSFORMATION OF POLITICAL
CHARISMA IN THE PROCESS OF DEMOCRATIC TRANSITION**

MARIAM MARGARYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

This project was carried out within the framework of the scientific project 20 RF-189 “Charismatic Leadership in the Contemporary Political Cultures of the East: An Anthropological Aspect”

The article puts forward an argument that the democratic transition as a multilayered process of political transformations implies a systematic study of political charisma. In this context, the author argues that the retreats might have mostly been avoided within the realm (frames) of the “third wave” by Samuel Huntington if the changes had occurred based on the principles of democratic consolidation creating opportunities to overcome political uncertainties on the one hand and to transform political charisma on the other. The author is convinced only transforming charismatic power, with its charismatic leaders, can confront various crises the country faces pursuing measurable, attainable, oriented and institutional solutions to the defined problems geared towards the future in time.

Keywords: democratic transition, democratic consolidation, political charisma, “predemocratic politicians”, public policy, the decline of charisma, multilevel charisma, the transformation of charisma.

*Ներկայացվել է խմբագրություն 30.08.2021
Երաշխավորվել է տպագրության 27.10.2021*